Արձանագրություն N 2

<< ՀՀ ԱՄ ԱԾ-ԳՀԱՇՁԲ-17/01>> ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների հայտերի բացման և գնահատման նիստի մասին

Գ. Աշնակ «20» Հուլիսի 2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	Միսակ Ղազարյան	– Աշնակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
Հանձնաժողովի անդամներ՝	Մարիամ Ավդալյան	– Աշնակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
	Մարինե Գրիգորյան	– Աշնակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
Գնումների համակարգող՝	Սասուն Դավթյան	

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1.Հայտերի բացման վայրի, օրվա և ժամվա մասին

ՀՀ Արագածոտնի մարզի Աշնակ համայնքի կարիքների համար հայտարարված «ՀՀ ԱՄ ԱԾ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցումով գնման հայտերի բացումը տեղի է ունեցել ՀՀ Արագածոտնի մարզի գ. Աշնակ, Վ. Իսրայելյանի փ, շ 43 հասցեում, 2017թ-ի հուլիսի 20-ին, ժամը 11:00-ին:

Վերոնշյալ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման նախահաշվային գինը կազմում է 2109360 (երկու միլիոն մեկ հարյուր ինը հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ Արագածոտնի մարզի Աշնակի համայնքապետարանի կողմից կազմակերպված գնմանը հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
«Մ.Ռ.Գ. ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Պռոշյան 27, հեռ (+374 93) 93 80 20

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակցի կողմից ներկայացված հայտերի ծրարները կազմված են և ներկայացված են հրավերների պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակցի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

6. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չ/Հ1	Չ/Հ1
«Մ.Ո.Գ. ՇԻՆ» ՍՊԸ	2000000	2000000

7. **Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

8. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

<< ՀՀ ԱՄ ԱՇ-ԳՀԱՇՁԲ-17/01>> ծածկագրով գնանշման հարցման մասով /ընտրված/ մասնակից է ճանաչվում «Մ.Ո.Գ. ՇԻՆ» ՍՊԸ-ը՝ որպես ընթացակարգի միակ և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի:

Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել մինչև 3 /երեք/ աշխատանքային օրով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի՝ ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն, ՀՀ Ֆինանսների նախարարությունից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ-ի հուլիսի 26-ին ժամը 11:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի գ. Աշնակ, Վ. Իսրայելյանի փ, շ 43 հասցեում (ՀՀ Արագածոտնի մարզի Աշնակի համայնքապետարանում):

Հանձնաժողովի

Նախագահ՝ Միսակ Ղազարյան

Անդամներ՝ Մարիամ Ավդալյան

Մարինե Գրիգորյան

Քարտուղար՝ Սասուն Դավթյան